# Բարի Սամարացի/ Բուժում Գերչափաքանակի Ընդունման Դեմ

## Կալիֆորնիայի Ակտ Գերչափաքանակի Ընդունման Դեմ Բուժման Մասին

(AB-635 Թմրանյութերի գերչափաքանակի ընդունման դեմ բուժում. պատասխանատվություն, Փոփոխություն 1-ին ԲԱԺՆՈՒՄ: Քաղաքացիական O րենսգրքի 1714.22 Բաժին)

Անձը **չի կրում** քաղաքացիաիրավական պատասխանատվություն կամ ենթակա չէ քրեական հետապնդման գերդոզավորմանը հակազդող դեղամիջոցների պահպանման, տարածման կամ տնօրինման համար, եթե՝

- Դեղամիջոցների տնօրինման արտոնություն չունեցող անձը վերապատրաստված է կամ գործում է բարեխղճորեն և ողջամիտ զգուշությամբ և չի վարձատրվում դրա դիմաց:

## «Բարի Սամարացու» Օրենքը

(ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ - HSC, ԲԱԺԻՆ 10: ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԿՏ (11000 – 11651), ԳԼՈՒԽ 6. Հանցագործություններ և Տույժեր (11350 – 11392), ՀՈԴՎԱԾ 4. Այլ իրավախախտումներ և Դրույթներ (11.3)

Գործում են օրենքներ, որոնք օգնում են պաշտպանել մարդկանց ձերբակալվելուց, եթե բուժօգնություն ստանալու կամ հաստատված օփիոիդային գերդոզավորմանը հակազդող դեղամիջոցներ տնօրինելու ժամանակ նրանք գործում են բարեխղճորեն և ողջամիտ զգուշությամբ:

Հանցագործություն չի համարվում անձնական օգտագործման նպատակով վերահսկվող թմրանյութերի կամ օժանդակ պարագաների տնօրինումը, եթե դուք բարեխղճորեն՝

- Դիմում եք բուժօգնության թմրանյութերից գերդոզավորում ունեցող մեկ այլ անձի համար ԿԱՄ
- Եթե դուք կամ այլ անձ գտնվում եք/է թմրանյութերի ազդեցության տակ գերդոզավորման դեպքում բուժօգնության դիմելու պահին
- Չեք խոչընդոտում բուժանձնակազմին կամ իրավապահ մարմիններին, որոնք արձագանքում են գերդոզավորման վիճակին:

SAPC | Substance Abuse Prevention and Control

County of Los Angeles Public Health

# Եթե ձեզ կամ ձեր մտերիմ անձին անրաժեշտ է բուժում, զանգահարեք մեզ ցանկացած պահի՝ 24/7:

## ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳԻԾ՝

24/7 **1.844.804.7500**

### ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լոս Անջելեսի Շրջան
Հանրային Առողջության Վարչություն
**ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ**

1000 S. Fremont Avenue
Building A-9 East 3-րդ Հարկ
**888.742.7900**
**publichealth.lacounty.gov/sapc**